## 51. ՄԱՐԹԻՆ ԱՇԿԸ

Մին շատ քյասիբ մարթ հղեննի հըղուղու գյուլյուլու մչանք մին պուլլուր, փափուկ, շատ ղաշանգյ պեն ա քթեննում, պիրում շենը։ Շինացեքյ լոխ հըվաքվում ըն, թա տըեսնան՝ տա հի՞նչ պեն ա։ Վըեչ մինն էլ կլոխ չի ինգյնում, թա տա հինչ ա։

Խաբարը հըսնում ա շահըեն։ Շահն էտ մարթին ծեն ա տամ, տանում ուրան պալատը։ Տա քյինամ ա շահըեն կոշտը, ուրան նհըետ էլ տանում էտ ղաշանգյ պենը, շահը յոր ա ծնում, տըփտըփում, վըեչ մին պեն կլոխ չի ինգյնում, ասում ա.—Հինչ տա՞մ, ինձ տաս։ Էտ մարթն ասում ա.—Ուրան քաշավը մին վըեսկե տու։

Շահն ուրան մարթոցը ծեն ա տամ, թա՝ տարեքյ էտ պուլլուր պենը քշըռեցեքյ, ուրան քաշավը մին վըեսկե տըվեքյ։ Էտ մարթին տանում ըն խըզնատունը, էտ պուլլուր պենը տինում քշըռքեն մին թայումը, վըեսկեն պիրում, վըեր քշըռըեն։ Վըեսկեն ածում ըն, ածում, քշըռքեն թայը տըեղան պիցրանում չի։ Փոխում ըն մըեծ քշըռքու յիրա քշըռում, էլլա չի քշըռքեն թայը տըեղան պիցրանում։ Պիրում ըն լափ մըեծ քշըռքու յիրա քշըռում, քշըռքեն թայն էլլա չի տըեղան ուրուր կյամ։ Նորից ըն քշեռքը փոխում, շահըեն խաղնան լոխ յիրա ածում, էլլա չի քշըռքեն թայը տըեղան ուրուր կյամ։

Խաբարը հըսցնում ըն շահըեն, շահն էտ մարթին ծեն ա տամ, հըրցնում, թա տու հինչ մարթ ը՞ս, քալի կախարդ ըս, եկալ ըս իմ խաղնան լոխ տանըես, վըեր դունղն ասըես վուչ, կլոխըտ կտրըել

ըմ տըլական։ Էտ մարթը շահըեն վըեննիրն ա ինգյում, ղաչանք-պըղատանք անում, ասում.—Ես մին շատ խուխատար, քյասիբ մարթ ըմ, խոխեքյըս եթիմ մի թողըել, էտ կուճուր պենը ես հըղ-ցան ըմ քթճլ, ըսկի վըիչ նա յըմ օղում, վըեչ վըեսկեն։

Շահն ուրան նազիր-վեզիրին հրաման ա տամ, վըեր ուրան երգյիրին ժուղովուրթեն մըեծան մինչև կուճուրը լոխ հըվաքեն ուրան քաղաքը։ Ժուղովուրթը լոխ հըվաքվում ըն շահըեն քաղաքը, հու վըեր էտ ղաշանգյ պուլուր պեննին եչում ա, պեն չի կլըխ ինգյում։ Շահը հըրցնում ա, թա ուրան երգյիրին մարթուցը լոխճինին պերալ ը՞ն։ Նազիր-վեզիրն ասում ըն, վըեր էհնինչ տըեղը մին հիվանդ, պառավ մարթ կա, նա յա մնացալ։ Շահն ա-սում ա.—Փայտոն ղըկեցեքյ, թող քյինա էտ հըլիվուրեն պիրի։

Փայտոն ըն ղարկում, քյինում ա էտ հըլիվուրեն պիրում, էտ պուլուր պենը տամ ըն ուրան, ասում.—Էսքան մարթուցան վըեչ մինը գյիդացալ չի, թա հինչ ա, բալի տու գյիդաս։ Հըլիվուրն էտ պուլուր պենը տինում ա քըըոքեն մին թայումը, էն մին թայն էլ մին մըննընուցու մըչանք վըեղ ածում, քըըոքեն էրկու թայերը կյամ ըն, բըըբարվում։ Շահըեն մարթիքյն ասում ըն.—Պա տա տիրալ ընք քըըոքեն մին թայումը, վըեսկեն նան խաղնան լոխ ածալ ընք էն մին թայը, տափան կորալ չի, էտ հունց ա՞, վըեր մին մըն-նանուց վըեղավ քըըոքեն թայը տափան եր ա կենում։ Հըլիվուրն ասում ա.—Սա մարթու աչկ ա, վըեսկավ, խըղնավ քուշտանալ չի, մենակ վըեղավ կըքուշտանա։

